ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/90/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 6 մարտի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի մարտի 6-ին քննելով Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Երվանդի Մարտիրոսյանի ընտանիքի անդամ՝ Յուրի Գուրգենի Մարտիրոսյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/90/2025 գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված իրավակարգավորումներով, իրականացրել է Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի ընտանիքի անդամ՝ Յուրի

Մարտիրոսյանի «Պաշտոնատար անձի ընտանիքի անդամի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների և ծախսերի» տարեկան հայտարարագրում (այսուհետ նաև՝ Հայտարարագիր) ներկայացված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, որի արդյունքում արձանագրվել է հետևյալը՝

Հայտարարագրի «Բ.3. Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում Յուրի Մարտիրոսյանը չի հայտարարագրել «ԳԱՎԱՌԻ ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ» ՍՊ ընկերության 85% և «Գավառտրանս» ՍՊ ընկերության 10% բաժնեմասերի սեփականատեր լինելու վերաբերյալ տվյալը:

1.2 Հանձնաժողովը վերը նշված տվյալի հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի փետրվարի 13-ին Յուրի Մարտիրոսյանին հասցեագրել է թիվ 01/560/1-2025 գրությունը, հրավիրելով Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն և գործի քննությանը մասնակցելու: Նշված գրությունը Յուրի Մարտիրոսյանի ներկայացուցիչը ստացել է առձեռն 2025 թվականի փետրվարի 18-ին:

1.3 2025 թվականի փետրվարի 18-ին պատշաճ ծանուցված Յուրի Մարտիրոսյանի ներկայացուցիչ Արամ Եսայանի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 20/25 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 2025 թվականի փետրվարի 27-ին՝ ժամը՝ 15:30-ին, Յուրի Մարտիրոսյանի ներկայացուցիչ Մարիետա Գաբրիելյանի մասնակցությամբ տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն: Գործի քննության ընթացքում ներկայացուցչի կողմից ներկայացվել է միջնորդություն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը հետաձգելու մասին՝ լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու նպատակով, որը բավարարվել է Հանձնաժողովի կողմից, և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը հետաձգվել է 2025 թվականի մարտի 6-ին, ժամը՝ 15:30-ին:

1.5 2025 թվականի մարտի 5-ին Յուրի Մարտիրոսյանի ներկայացուցչի կողմից Հանձնաժողով են ներկայացվել լրացուցիչ ապացույցներ:

1.6 2025 թվականի մարտի 6-ին, ժամը՝ 15:30-ին, պատշաճ ծանուցված վարույթի մասնակցի բացակայությամբ իրականացվել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարույթի մասնակից Յուրի Մարտիրոսյանի ներկայացուցիչ Արամ Եսայանը, 26.02.2025 թվականին թիվ 1424151 գրությամբ ներկայացրել է դիրքորոշում, որով հայտնել է, որ «(...) Յուրի Մարտիրոսյանը հաշվետու տարվա (2023 թվականի) ընթացքում «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով չի հանդիսացել Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի ընտանիքի անդամ, քանի որ 183 և ավելի օր չի բնակվել վերջինիս հետ համատեղ: Ուստիև Յուրի Մարտիրոսյանն առհասարակ չի կրել տարեկան եկամուտների հայտարարագիր ներկայացնելու պարտականություն, այսինքն՝ չի կարող վարչական պատասխանատվության ենթարկվել մի արարք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, որը կատարելու պարտականություն առհասարակ չի կրել:

Հղում կատարելով Սահմանադրության 39-րդ, 79-րդ հոդվածներին, Սահմանադրական դատարանի 12.10.2010թ. ՍԴՈ-920 որոշմանը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 9-րդ հոդվածին՝ նշել է, որ վարչական պատասխանատվությունը կիրառվում է անձի նկատմամբ միմիայն վարչական իրավախախտման փաստի առկայության դեպքում: Վարչական իրավախախտումների խիստ սպառիչ ցանկը, դրանց զանցակազմերի բովանդակությունը, կատարման դեպքում կիրառվող պատասխանատվության հիմունքները սահմանված են Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով:

Անձին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի որևէ հոդվածով վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է դրանում նկարագրված վարչական իրավախախտման զանցակազմի բոլոր տարրերի ամբողջական առկայությունը:

Քննարկվող իրավիճակում Յուրի Մարտիրոսյանը 2023 թվականի ընթացքում 183 և ավելի օր չի բնակվել իր հոր՝ Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի հետ, ուստի չի հանդիսացել վերջինիս ընտանիքի անդամ օրենքի իմաստով: Յուրի

Մարտիրոսյանը սովորում և բնակվում է Երևան քաղաքում, այլ ոչ թե իր հաշվառման վայրի հասցեում:

Չհանդիսանալով համայնքի ղեկավարի ընտանիքի անդամ՝ Յուրի Մարտիրոսյանը չէր կարող կրել 2023 թվականի տարեկան եկամուտները հայտարարագրելու պարտականություն, հետևաբար չի կարող պատասխանատվության ենթարկվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի հիմքով, քանի որ չի հանդիսանում այդ զանցանքի սուբյեկտ՝ հայտարարատու:

Ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ Յ. Մարտիրոսյանի հայրը թյուրիմացաբար վերջինիս ևս ներառել է իր ընտանիքի անդամների ցանկում, ապա դրա համար Յ. Մարտիրոսյանը չի կարող պատասխանատվության ենթարկվել, քանի որ այդ թյուրիմացությունն իր գործողությունների հետևանքը չէ: Հակառակ մեկնաբանությունն ուղղակիորեն կհակասի վարչական իրավունքի հիմնարար անձնական պատասխանատվության և ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքին:

Ուստի անձնական պատասխանատվության և ըստ մեղքի պատասխանատվության հիմնարար սկզբունքների տեսանկյունից Յ. Մարտիրոսյանը չի կարող նաև պատասխանատվության ենթարկվել այլ անձի կողմից իրեն որպես հայտարարատու Հանձնաժողովին ներկայացնելու համար:»:

Այնուհետև, 05.03.2025 թվականին Յուրի Մարտիրոսյանի ներկայացուցչի կողմից ներկայացվել են գրավոր ապացույցներ, որոնք հիմնավորում են այն փաստը, որ Յուրի Գուրգենի Մարտիրոսյանը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով չի հանդիսանում Գուրգեն Երվանդի Մարտիրոսյանի ընտանիքի անդամ և 2023 թվականի ընթացքում 183 և ավելի օր չի բնակվել վերջինիս հետ համատեղ:

Մասնավորապես, ներկայացվել է գրություն այն մասին, որ Յուրի Մարտիրոսյանը 2015 թվականից ի վեր մշտապես բնակվում է [redacted] հասցեում: Այս փաստը հաստատում են Յուրի Մարտիրոսյանի հարևանությամբ բնակվող անձինք: Մասնավորապես՝ կից ներկայացրել է հարևանությամբ բնակվող Թագուհի Ռազմիկի Գևորգյանի, Արմեն Արմենի Խրիմյանի, Ռուզան Լևոնի Հովհաննիսյանի, Լեոն Սարգսի Ավետիսյանի 04.03.2025 թվականին տրված հայտարարություններն այն մասին, որ Յուրի

Մարտիրոսյանը 2015 թվականից ի վեր բնակվում է [redacted] հասցեում:

Բացի այդ, ներկայացվել է Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի կողմից տրված տեղեկանք այն մասին, որ Յուրի Մարտիրոսյանը 2022 թվականից առկա ուսուցմամբ սովորում է Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, որպիսի փաստը ևս հիմնավորում է այն հանգամանքը, որ վերջինս մշտապես բնակվում է Երևան քաղաքում:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից և դրանք հիմնավորող ապացույցներից՝ Յուրի Մարտիրոսյանի ներկայացուցիչը խնդրել է կարճել Յուրի Մարտիրոսյանի նկատմամբ հարուցված վարույթը՝ իրավախախտման փաստի բացակայության հիմքով:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/90/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 2-Ա որոշման համաձայն Գուրգեն Մարտիրոսյանը օրենքի ուժով համարվել է ընտրված համայնքի ղեկավար (https://gavarihamaynqapetaran.am/Pages/DocFlow/Default.aspx?dt=mer) և Գավառի համայքապետարանի պաշտոնական կայքէջում առկա տեղեկության համաձայն մինչ օրս զբաղեցնում է այդ պաշտոնը (https://gavarihamaynqapetaran.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=75c89795-559a-4c1c-8918-65a144d1efba):

3.2 Հայտարարագրում ներկայացված տվյալների համաձայն՝ Յուրի Գուրգենի Մարտիրոսյանը հանդիսանում է հայտարարատու պաշտոնատար անձ՝ Գուրգեն Մարտիրոսյանի որդին:

3.3 Գուրգեն Մարտիրոսյանի պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրի «Ա.1. Հայտարարատու պաշտոնատար

անձի տվյալների» բաժնում ներկայացված տվյալների համաձայն Գուրգեն Մարտիրոսյանը հաշվառված է և փաստացի բնակվում է [redacted] հասցեում:

3.4 Վարչական վարույթի ընթացքում Յուրի Մարտիրոսյանի ներկայացուցիչների կողմից ներկայացված դիրքորոշման և կից ներկայացված ապացույցների համաձայն՝ Յուրի Գուրգենի Մարտիրոսյանը 2015 թվականից առ այսօր բնակվում է [redacted] հասցեում:

3.4 Հայտարարագրերի էլեկտրոնային համակարգում առկա, Գուրգեն Մարտիրոսյանի 2021, 2022 և 2023 թվականների տարեկան հայտարարագրերի համաձայն՝ Գուրգեն Մարտիրոսյանի կինը նույնպես փաստացի բնակվում է [redacted] հասցեում:

3.5 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ 2023 թվականի հոկտեմբերի 17-ից «ԳԱՎԱՌԻ ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ» ՍՊ ընկերության 85% և «Գավառտրանս» ՍՊ ընկերության 10% բաժնեմասերի սեփականատեր է հանդիսանում Յուրի Գուրգենի Մարտիրոսյանը:

3.6 Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում՝ չի հայտարարագրվել որդու՝ Յուրի Մարտիրոսյանի «ԳԱՎԱՌԻ ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ» ՍՊ ընկերության 85% և «Գավառտրանս» ՍՊ ընկերության 10% բաժնեմասերի սեփականատեր լինելու վերաբերյալ տվյալը:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են (...) համայնքների ղեկավարների (...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 34-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի չափահաս անդամները համարվում են հայտարարագիր ներկայացնելու

պարտականություն ունեցող անձ և հայտարարատու պաշտոնատար անձի հայտարարագրում լրացնում են իրենց գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալները, պատասխանատու են դրանց իսկության համար:

4.3 Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամներն (ընտանիքի կազմի մեջ մտնող անձինք) են նրա ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), հայտարարատու պաշտոնատար անձի խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, **հայտարարատու պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձ:**

4.4 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 3-րդ կետի համաձայն Հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝ բաժնային արժեթղթերը, այլ ներդրումը հավաստող փաստաթղթերը (բաժնետոմսը, բաժնեմասը, փայաբաժինը), ինչպես նաև պարտքային արժեթղթերը (պարտատոմսը, չեկը, մուրհակը և Հայաստանի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթ, բացառությամբ բանկային վկայագրի):

4.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.8 Նույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.9 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.10 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.11 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 247-րդ հոդվածով սահմանված իրավանորմի համաձայն՝ *<u>վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման</u>* նույն հոդվածի 1-ին կետով սահմանված հանգամանքների դեպքում, այն է՝ ***վարչական իրավախախտման դեպքի*** կամ կազմի ***բացակայությունը***:

4.12 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.13 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ իրավախախտման դեպքը բացակայում է հետևյալ պատճառաբանությամբ.

Գուրգեն Մարտիրոսյանը, պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրի «Ա.1. Հայտարարատու պաշտոնատար անձի տվյալների» բաժնում ներկայացված տվյալների համաձայն հաշվառված է և միաժամանակ փաստացի բնակվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի [redacted] հասցեում, իսկ նրա որդին՝ Յուրի Մարտիրոսյանը Հանձնաժողով ներկայացված ապացույցների համաձայն 2015 թվականից առ այսօր փաստացի բնակվում է [redacted] հասցեում: Նշված փաստական տվյալներից հետևում է, որ պաշտոնատար անձ Գուրգեն Մարտիրոսյանը և իր չափահաս որդին՝ Յուրի Մարտիրոսյանը հաշվետու ժամանակահատվածում՝ 2023 թվականի ընթացքում, համատեղ չեն բնակվել, ուստի հիմք ընդունելով Օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի կարգավորումները՝ Յուրի Մարտիրոսյանը հայտարարագիր ներկայացնելու պարտականություն չի կրել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 247-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2025 թվականի փետրվարի 18-ին հարուցված վարչական իրավախախտումների վերաբերյալ ՎԻՎ/90/2025 գործի վարույթը կարճել՝ իրավախախտման դեպքի բացակայության հիմքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Յուրի Գուրգենի Մարտիրոսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ